

ռոմանաագերմանական ֆակուլտետի, անգլիական  
բանասիրության ամբիոնի դոցենտ,  
բ.գ.դ. Նարինե Հարությունյան  
e.mail: [naramela@km.ru](mailto:naramela@km.ru), tel. / 091 23 43 43 /

## **Միջմշակութային իրազեկության ձ-ավորման հայեցակերպերը**

Տերմինաբանական առումով իրազեկություն/կոմպետենտություն/ բառը նշանակում է ոչ միայն յուրացված գիտելիքների ու հնարքների հանրագումար, որոնք անձը կարող է կիրառել անհրաժեշտության դեպքում միջմշակութային հաղորդակցության մեջ՝ ՄՅ-ում, այն ենթադրում է կարողությունների համալիրի առկայություն, որը թույլ կտա համարժեքորեն գնահատել հաղորդակցային իրադրությունը, հարաբերակցել հաղորդակցական դիտավորությունը խոսքային – ոչ խոսքային միջոցների ենթադրյալ ընտրության հետ, կյանքի կոչել հաղորդակցային նպատակադրումը և, հետադարձ կապի օգնությամբ, վերիֆիկացնել հաղորդակցային ակտի արդյունքները:

Որպեսզի պարզենք, թե ինչ ունակությունների ու հմտությունների պետք է տիրապետի անձը ՄՅ-ին հաջողությամբ մասնակցելու համար անհրաժեշտ է քննել միջմշակութային իրազեկության հասկացությունը: Այն բաղկացած է լեզվական, հաղորդակցային և մշակութային իրազեկություններից: Միահյուսվելով դրանք ձևավորում են որակապես նոր ամբողջություն, որն օժտված է առանձին վերցրած բաղադրիչներից յուրաքանչյուրի ունեցածից տարբերվող սեփական նշաններով:

*Լեզվական իրազեկություն* հասկացությունը առաջին անգամ կիրառել է Ն. Խոմսկին, որը մշակել է այն ներյուրացված գեներատիվ քերականության հիման վրա և այդպես ասելով հասկանում էր «լեզվաբանական ներհայեցողությունը», «լեզվական գիտելիքը», «լեզվական վարքը» և, ի վերջո, կատարելապես խոսողի ունակությունը՝ տիրապետելու լեզվական կանոնների վերացական համակարգին (ՕՈՎԻՐԿՊ 1987, 198):

Խոմսկու հայեցակարգի համաձայն՝ լեզվական իրազեկությունը ներառում է լեզվաբանական գիտելիքի հնչակարգային, շարահյուսական և իմաստաբանական բաղադրիչները: Յու. Մանֆրեդն առաջարկում է քննել քերականական իրազեկությունը, որը, նրա տեսանկյունից, «խոսողի/լսողի ընդունակությունն է ճիշտ ընտրություն

կատարելու լեզվական առկա նշաններից ու դրանց համակցման կանոններից՝ լեզվական կառույցներ ստեղծելու նպատակով» (նույն տեղում, 198): Լեզվական իրազեկության վերոհիշյալ բաղկացուցիչների հետ մեկտեղ, Գ. Ի. Բոգինը հիշատակում է ուղղագրության կանոնների, լեզվի գործառույթների, ոճերի տիրապետումը և ամբողջական տեքստի ազատորեն օգտագործումը (ըՏՀՌՎ 1980, 7-11): Այսպիսով, լեզվական իրազեկությունը բազմաբնույթ երևույթ է, որը պահանջում է լեզվաբանական բազմակողմանի ունակություններ ու հմտություններ:

Ջ. Շումանը առանձնացնում է լեզվի յուրացման վրա ազդող հետևյալ գործոնները.

- սոցիալական (օտար մշակույթի մեջ տևական ժամանակ ապրելը, փոխհարաբերությունների բնույթը լեզվակիրների ու ոչ լեզվակիրների խմբերի միջև և այլն),

- աֆեկտիվ (գործիքային և ինտեգրումային շարժառիթները, մշակութային ցնցումը, մշակույթի հանդեպ վերաբերմունքը և այլն),

- անձնային (անորոշության նկատմամբ համբերատարությունը, ինքնագնահատականի մակարդակը, եսակողմնորոշումը),

- ճանաչողական (ճանաչողական ոճը, կախումը/չկախվածությունը շրջապատից),

- կենսաբանական և այլն (Schumann 1974):

Քերականական կանոնների լավ իմացությունը և հարուստ բառապաշարը բավարար չեն, որ խոսենք լեզվական իրազեկության բարձր մակարդակի մասին: Ա. Ա. Լեոնտևը իրավացիորեն ենթադրում է, որ լեզվի ճիշտ ըմբռնումը տեղի է ունենում միայն իրականության ակտիվ արտացոլման ու ակտիվ շփման արդյունքում (խպՏՎՑպՉ 1997, 174):

Չնայած օտար լեզվի արտասանական նորմաների, բառապաշարի ու քերականության իմացության կարևորությանը, դա քիչ է կոնկրետ հաղորդակցային իրադրություններում դրա ճիշտ կիրառման համար: Լեզուն մարդու ընդհանուր հոգեբանական ընդունակության մարզերից մեկն է, որով որոշվում է հաղորդակցության ճակատագիրը: Այս գաղափարը համընկնում է Խոմսկու դիրքորոշմանը, որը սահմանազատել էր *լեզվական իրազեկությունը (linguistic competence)*, այսինքն «լեզվական կանոնների մենթալ ներկայացուցչությունները, որոնք, նրա կարծիքով, հանդես են գալիս որպես կատարելապես խոսողի/լսողի ներքին քերականություն» (ԻոսպՉրՍՈ՛ 1996, 9), և *լեզվաբանական իրագործումը (linguistic performance)*՝ իրական շփման ժամանակ խոսքի ըմբռնումն ու արդյունավորումը: Խոմսկու կարծիքով, լեզվաբանությունը չպետք է բավարարվի իրազեկության նկարագրմամբ: Նրա

նպատակն է ցույց տալ, թե ինչպես է մարդը ամենօրյա փորձի հիման վրա կառուցում գիտելիքների համակարգը (Crystal 1987, 409): Այսպիսով, խոսքը ոչ միայն սեփական մտքերն արտահայտելու ընդունակության մասին է, այլև որպես լեզվակիր մտածել կարողանալու, որը ենթադրում է լեզվում արտացոլված մշակութային կերպարների տեսանելիացում:

Լեզվական իրազեկությունը դուրս է գալիս լեզվից օգտվելու կանոններին տիրապետելու շրջանակներից. այն ենթադրում է սեփական կոնցեպտուորտի ընդլայնում և աշխարհի պատկերի մոդիֆիկացում միջմշակութային փորձի հիման վրա: Յու. Ն. Կարաուլովի հայեցակարգի համաձայն՝ անձը գործառնում է լեզվական իրազեկության երեք մակարդակներում՝ 1) խոսքա-իմաստաբանական (անձի բառապաշար), 2) լեզվաճանաչողական (անձի թեզաուրուսը, որում դրոշմված է աշխարհի մասին գիտելիքների համակարգը կամ «աշխարհի պատկերը»), 3) պատճառաբանված (անձի գործունեական-հաղորդակցային պահանջունքները, որոնք արտացոլում են նրա գործաբանությունը՝ նպատակների, մոտիվների, հիմքերի համակարգը) (ԽՈՐՈՑՍԶ 1987, 238):

Վ. Ի. Կարասիկը նույնպես հանգում է այն եզրակացության, որ «լեզվական իրազեկությունը ունի մի քանի չափումներ».

- 1) լեզվի արդիական/երևութական տիրապետումը. լեզվի իրական իմացությունը,
- 2) նորմատիվային ճշտությունը. կրթված և ոչ ուսյալ լեզվակիրների լեզվական իրազեկությունը,
- 3) համակարգային ճշտությունը. լեզվակիրների ու ոչ մայրենի լեզվով խոսողների լեզվական իրազեկությունը,
- 4) լեզվական հարստությունը. լեզուն գործածողների ու փորձագետների լեզվական իրազեկությունը, ովքեր տիրապետում են գրական կամ նախագրական բազմազան ոճերի (ԽՈՐՈՐՈՍ 1992, 63-64):

ՄԳ-ի պայմաններում լեզվական իրազեկությունը պատասխանատու է շփման ժամանակ անհրաժեշտ լեզվական միջոցների ճիշտ ընտրության, ճիշտ հանձնառության, իրականության ձևերի հետ մենթալ կադապարների հարաբերակցման, մենթալ սխեմաների ու ճանաչողական փորձով կառույցների համակեցության, մեկ անգամ ձեռք բերած լեզվական փորձը համանման հաղորդակցային իրադրություններում կիրառելու համար: Օտար լեզվին տիրապետելու բարդությունն այն է, որ ուսումնական իրավիճակները կարող են հեռու լինել իրական փորձից, ուստի դրանց կրկնումը իրական շփման ժամանակ կարող է լուրջ դժվարություններ հարուցել:

Ըստ էության, լեզվական իրազեկությունը հարաբերական հասկացություն է, հատկապես ՄՅ-ում կիրառելիս: Նախ՝ հարաբերականության դրսևորում է այն, որ տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների լեզվական իրազեկության գնահատման համար կիրառվում են ոչ միանման չափորոշիչներ: Երկրորդ՝ տարբեր մշակույթներում կարող են չհամընկնել պատկերացումներն այն մասին, թե որն է լեզվի կիրառման ճիշտ ձևը և ոչ ճիշտը: Օրինակ՝ ամերիկյան անգլերենի համար նորմատիվային համարվող որոշ ձևեր բրիտանացիները կարող են համարել սխալ: Երրորդ՝ մայրենի լեզվին տիրապետելու պահանջներն ավելի մեծ են, քան օտար լեզվին: Չորրորդ՝ իրազեկության մակարդակի գնահատման տարբերությունը կախված է հաղորդակցության նպատակներից. մարդը կարող է հրաշալիորեն շփվել կենցաղում, սակայն չունենալ իրազեկության բավականաչափ մակարդակ՝ կատարելու ավելի որակյալ գործողություններ, օրինակ՝ զրուցելու մասնագիտական թեմաներով, ելույթ ունենալու գիտաժողովներին կամ քննարկելու փիլիսոփայական հիմնախնդիրներ: Քանի որ լեզուն սերտորեն կապված է մտածողության հետ, միջմշակութային շփման գործընթացը կարող է ծնել ներքին կոնֆլիկտ լեզվական իրազեկության մակարդակների միջև՝ մայրենի ու օտար լեզուներում: Այն մարդու համար, ով սովոր է մայրենի լեզվով ճիշտ, ամենայն մանրամասնությամբ ու իմաստային նրբերանգներով արտահայտել իր մտքերը, լեզվական միջոցների անբավարարությունը օտար լեզվով հաղորդակցվելիս իսկական տառապանք է: Այն դեպքերում, երբ պարբերաբար մասնակցությունը ՄՅ-ին անխուսափելի է, այդ հակասությունը դառնում է լեզվական ունակությունները կատարելագործելու և իրազեկության ավելի բարձր մակարդակի անցնելու խթան:

Հաշվի առնելով լեզվական նշանակության դինամիկությունը՝ պետք է նաև նկատի ունենալ, որ այն ենթակա է փոփոխությունների՝ կախված «այն յուրացնող» լեզվակիր անձի խառնվածքից, շփման համատեքստից, կիրառման ժամանակից և այլն:

Քանի որ լեզվական իրազեկությունը ներառում է լոկ համարժեք շփման համար անհրաժեշտ ունակությունների մի մասը, մեծ նշանակություն է ստանում *հաղորդակցային իրազեկության* հասկացությունը, որն առաջին անգամ կիրառեց Գ. Հայմսը:

Չափանիշները, որոնց հիման վրա ամերիկյան գիտության մեջ մշակվեց հաղորդակցային իրազեկության հասկացությունը, համակողմնորոշումն ու համակարգումն էին: Համակողմնորոշումը դիտվում է որպես փոխընթերցման որոշակի աստիճանի հասնելու ընդունակություն այնպիսի խոսքային ռազմավարությունների

միջոցով, ինչպիսին են հաստատումը (*acknowledging*), արտացոլումը (*mirroring*), շրջասությունը (*paraphrasing*), հստակեցումը (*clarifying*) և այլն: Իր հերթին համակարգում ասելով նկատի է առնվում սեփական խոսքային գործողությունները այլ հաղորդակցվողների գործողություններին, ինչպես նաև շփման անհատական ու խմբային նպատակներին հարմարեցնելու կարողությունը: Համակարգման ռազմավարությունները ներառում են ներումը (*apologie*), հերքումը (*disclaimer*), մետահաղորդագրությունը (*meta-accounts*) և այլն: Համակողմնորոշման ու համակարգման բացակայությունը աղերսվում է անկանոն, անհամաչափ շփման հետ, որին բնորոշ են զրուցակցին բազմիցս ընդհատելն ու ճշտող հարցեր տալը (Matyash 1999):

Հաղորդակցային իրազեկությունը պարունակում է մեխանիզմներ, հնարքներ ու ռազմավարություններ, որոնք անհրաժեշտ են շփման արդյունավետ գործընթացի ապահովման համար: Հաղորդակցային իրազեկության նկատմամբ պահանջները ՄՀ-ում էլ ավելի խիստ են, քան մեկ մշակույթի ներսում, քանի որ ենթադրվում է ոչ միայն մարդկային շփման օրինաչափությունների ըմբռնումը, այլև բազմաթիվ մշակութային տարբերությունների հաշվի առնումը, նրբազգացությունը հաղորդակցային իրադրության նվազագույն փոփոխությունների ու զրուցակցի պահվածքի նկատմամբ: Հաղորդակցվողը միշտ պետք է հիմք ընդունի ինչ-որ բանի սեփական չինացությունը, ընդունի իր սխալվելու հնարավորությունը և ունենա սխալները շտկելու պատրաստակամություն: Այս դեպքում բազմակի մեծանում է ներհայեցողության դերը:

ՄՀ-ում կիրառվող հաղորդակցային իրազեկության բաղկացուցիչները հետևյալն են.

*ա/ ակտիվությունը.* ՄՀ-ի մեջ ներգրավվելու զրուցակցի պատրաստակամության՝ տվյալ մշակույթի համար առանձնահատուկ ազդանշանները կամ, հակառակը, շփվելու ցանկություն չունենալը մեկնաբանելու կարողությունը, շփման մեջ ներգրավվածության աստիճանը, իրադրությունից ու մշակութային նորմերից կախված՝ խոսելու ու լսելու չափաբաժինները որոշելու կարողությունը, արդյունավետությունը, այսինքն՝ սեփական միտքը համարժեք կերպով արտահայտելու և զրուցակցի միտքը հասկանալու կարողությունը, զրույցը անհրաժեշտ հունով տանելու կարողությունը, տվյալ մշակույթի համար ընդունելի հաղորդակցային դերերի ազդանշանները և շփման ավարտի ազդանշանները հաղորդելու ու մեկնաբանելու կարողությունը,

բ/ *համարժեք ընտրությունը*. հաղորդակցային տարածության; գրույցի թեմայի; բանավիճային ժանրի, շփման ռեգիստրի ու տոնայնության; խոսքային ու ոչ խոսքային միջոցների; խոսակցական ռազմավարությունների,

գ/ *դինամիկությունը*. էնպատիան՝ նրբանկատությունը գրուցակցի տրամադրվածության հանդեպ, հետադարձ կապի խոսքային ու ոչ խոսքային ազդանշանների «ընթերցումը», կարեկցելու ունակությունը, հարմարվողականությունը՝ նկատի ունենալով հաղորդակցվողների սոցիալական կարգավիճակն ու միջմշակութային տարբերությունները; ճկունությունը թեմաների ընտրության և փոխարկման ժամանակ, սեփական հաղորդակցային վարքի շտկման պատրաստականության բարձր աստիճանը:

ՄԳ-ի արդյունավետության համար անհրաժեշտ ևս մեկ շատ կարևոր գործոն է *մշակութային իրազեկությունը*, որի ուսումնասիրման անհրաժեշտությունը բազմիցս մատնանշել են գիտնականները (տե՛ս, օրինակ, Damen 1987, 215): Մշակութային իրազեկությունը ենթադրում է տվյալ մշակույթին բնորոշ կանխենթադրույթների, ֆոնային գիտելիքների, արժեքային կողմնորոշումների, հոգեբանական ու սոցիալական նույնականության ըմբռնումը:

Մշակութային իրազեկության հասկացությունը որոշակիորեն համընկնում է մշակութային գրագիտության հետ: Մշակութային գրագիտության ցուցանիշների զանազանումը բարդ, հակասական, գիտական աշխարհում շատ քննարկվող հիմնախնդիր է, որը ոչ միայն տեսական, այլև կիրառական բնույթի է: Ի՞նչ ծավալի տեղեկատվության պետք է տիրապետի մարդը, որպեսզի համարվի մշակութային առումով գրագետ: Պե՞տք է արդյոք լինի տեղական կամ համաշխարհային մշակույթ, ու եթե լինի համաշխարհային, ապա պե՞տք է, որ այն գործնականում հանգեցվի արևմտյան մշակույթին, ինչպես ընդունված է ժամանակակից աշխարհում: Եվ, ի վերջո, այն կարելի՞ է արտահայտել քանակական ու նյութական տեսքով:

Ամենահայտնի փորձը նշյալ ուղղությամբ «*Cultral Literacy*» մենագրությունն է և է. Զիրշի համանուն բառարանը (Hirsch 1988: Hirsch 1993), որը ամերիկյան ապամշակութայնացման մոլի կողմնակիցներից է և ազգային տեզաուրուսը հավասարեցնում է ամերիկյան արժույթին՝ դոլարին (Hirsch 1988, xi): Զիրշի հայեցակարգի ելությունը կրթված ամերիկացու մշակութային թեզաուրուսը ամերիկյան մշակույթի ներսում որպես արդյունավետ հաղորդակցության հիմք ներկայացնելու փորձն է, ինչը նա անվանում է «ազգային հաղորդակցություն» (Hirsch 1988, xi): Զիրշը

մշակութային գրագիտության մասին գրում է որպես մի երևույթի, որը կոչված է ստեղծելու «կոմունալ կոոպերացման ոգի»: Նա դրա մեջ ներգրավում է ֆոնային գիտելիքներ, որոնք հնարավորություն են տալիս մշակույթը կրողին թերթն ընթերցել ինչպես բացահայտ, այնպես էլ ոչ բացահայտ տեղեկատվության ընկալման համապատասխան մակարդակով՝ հարաբերելով կարդացածը հասկացվող համատեքստի հետ, որն իմաստ է հաղորդում գրվածին: Ըստ Հիրշի՝ մշակութային գրագիտությունը «մեզ դարձնում է ճանաչողության ստանդարտ գործիքի ու հաղորդակցության տերեր՝ այդպիսով թույլ տալով մեզ բանավոր ու գրավոր եղանակով, ժամանակի ու տարածության մեջ հաղորդել և ստանալ բարդ տեղեկատվություն» (նույն տեղում, 2-3): Հիրշի ջանքերը բարձր գնահատականի են արժանի, որովհետև, չնայած թեզաուրուսը կազմելիս սուբյեկտիվության որոշակի աստիճանին, խորհրդատուների 90 տոկոսը համամիտ էին բառարանում ընդգրկված լեզվական միավորների նրա ընտրության հետ: Հիրշը գրում է. «Պատմությունը որոշել է, թե ինչպիսին են այդ տարրերը: Դա հրապարակային բանավեճի միջավայրն է, գործիքները, որոնց օգնությամբ մենք կարող ենք մեր հայացքները փոխանցել ուրիշ մարդու և որոշումներ կայացնել ժողովրդավարական եղանակով» (նույն տեղում, 107):

ԱՅ-ի մասնակցի մշակութային իրազեկությունը նաև ներառում է անհրաժեշտ տեղեկատվության հայթայթման կարողությունը բառարանի կազմում չընդգրկված միավորներից՝ դարձվածքներից, եզրույթներից, սլենգից, ժարգոնային ձևերից, բարբառներից և այլն: Այն ենթադրում է տեղեկատվության դասդասման ունակություն միջմշակութային շփման համար՝ նրա նշանակալիության տեսանկյունից: Օրինակ՝ անհրաժեշտ է իմանալ, որ Ջորջ Վաշինգտոնն ընտրվել է ԱՄՆ-ի առաջին նախագահ, նրա անունով են կոչվել ԱՄՆ-ի մայրաքաղաքը, նահանգ, քուլեջներ ու համալսարաններ, փողոցներ ու հրապարակներ և ԱՄՆ-ի մեկ դոլարանոց թղթադրամի վրա պատկերված է Վաշինգտոնը: Սակայն շատ քչերը ծանոթ կլինեն այն փաստին, որ ԱՄՆ-ի առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնի մահից հետո պատրաստվում էին նրանից զոմբի սարքել<sup>1</sup>: Մյուս կողմից, բոլորին է հայտնի Ջ. Քենեդու մահվան ժամանակն ու ողբերգական

---

<sup>1</sup> Այդ գաղափարի հեղինակը ճարտարապետ ում Ռիլյամ Թորթոնն է, ով փորձել է վերածնել Վաշինգտոնին: Թորթոնը հայտնի է որպես Կապիտոլիումի շենքի ճարտարապետ, նաև ուներ բժշկի դիպլոմ և հետաքրքրվում էր արյան փոխներարկմամբ՝ այդ դարաշրջանի նորարարական գաղափարով: Նախագահի հարությունը պետք է տեղի ունենար մի քանի փուլով. Հուղարկավորությունից առաջ Վաշինգտոնի մարմինը պատել էին սառույցով, պետք է նրան ապաստեցնել, նրա թոքերի մեջ օդ մղել, նաև ներարկել գառան արյուն, որը մարմնի մեջ կյանքի կայծ կառաջացներ: Չոմբի-Վաշինգտոնի հայտնվելուն խոչընդոտել է նախագահի կինը, ով ասել է, թե իր ամուսինը բավական աշխատել է կենդանության օրոք և հավերժ հանգստի է արժանացել (The Daily Mail):

հանգամանքները: Ակնհայտորեն, ուղեցույց պետք է դառնա պոստեմպիալ գրուցակցի մշակութային գրագիտության ծավալը:

Հարկ է նկատի ունենալ, որ մշակութային գրագիտության ծավալը կազմված է ոչ միայն մշակութային-ինքնահատուկ տեղեկատվությունից, այլև, ընդհանուր առմամբ, աշխարհի մասին տեղեկատվությունից (հաղորդակցվողների ներկայացրած երկրների սահմաններից դուրս): Է. Դ. Հիրշը բողոքում է, որ վերջին տասնամյակներում ամերիկյան դպրոցների շրջանավարտները զուրկ են մշակութային բառապաշարից, որին տիրապետում էին նախորդ սերունդները, և այդ երևույթն անվանում է «նոր անգրագիտություն» (*new illiteracy* – Hirsch 1998: 108):

Մշակութային գրագիտությունը իրազեկության առավել դինամիկ բաղադրիչն է: Ի շարս բավականին կայուն պատմական ու աշխարհագրական տվյալների, գոյություն ունեն ընթացիկ քաղաքական իրադրության, սկանդալների, նորածնության և այլ բաների հետ կապված տարրեր, որոնք ծնվում են շատ արագ ու մերվում են մշակութակիրների հիշողության մեջ: Այդ դինամիզմը պահանջում է մշակութային գրագիտության ծավալի մշտական համալրում:

ՄԶ-ն այն եզակի ոլորտն է, որտեղ իրազեկության զանազան տեսակները (լեզվական, մշակութային, հաղորդակցային) կարող են գոյություն ունենալ տարանջատ: Լեզվին հրաշալի տիրապետող մարդը կարող է այնքան էլ լավ չտիրապետել հաղորդակցային ու մշակութային իրազեկությանը: Մյուս կողմից, հաղորդակցվողը կարող է լավ ծանոթ լինել այլ երկրի պատմության ու մշակույթի հետ, սակայն չտիրապետել օտար լեզվի: Մարդը, ով չգիտի ոչ մեկը, ոչ մյուսը, սակայն օժտված է շփվելու բնատուր տաղանդով, գրուցակցի տրամադրության նրբերանգները ընկալելու ունակությամբ, կարող է նրա հետ «ընդհանուր լեզու» գտնել՝ օգտվելով շփման ոչ խոսքային միջոցներից կամ թարգմանչի ծառայությունից: Բնորոշ իրավիճակ է նաև այն, երբ լեզվին լավ չտիրապետող ներգաղթյալը, որը, սակայն, բավականաչափ երկար է ապրել տվյալ մշակույթում, կարողանում է արդյունավետ շփվել՝ օգտվելով յուրացված խոսքային ու ոչ խոսքային միջոցների նվազագույն հավաքածուից:

Օտար մշակույթում լիարժեքորեն գործառնելու տարբեր աստիճանները ապահովում են միջմշակութային իրազեկության տարբեր մակարդակներ. 1) գոյատևման համար անհրաժեշտ մակարդակ, 2) օտար մշակույթի մեջ «մուտք գործելու» համար բավարար մակարդակ, 3) նոր մշակույթում լիարժեքորեն ապրելու, այն «յուրացնելու»



համար անհրաժեշտ մակարդակ, 4) լեզվակիր անձի նույնականությունը լիակատար կերպով իրագործելու հնարավորություն տվող մակարդակ:

Միջմշակութային համարժեք ըմբռնման և արդյունավետ գործունեության համար ՄՀ-ի համատեքստում հարկավոր է ուղիղ համեմատական կախվածություն լեզվական, հաղորդակցային ու մշակութային իրազեկությունների մակարդակների միջև: Անհամաչափության դեպքում շատ մեծ է չհասկացվածության հավանականությունը, քանի որ լեզվին հրաշալի տիրապետող մարդուց ակնկալում են մշակութային գրագիտության համապատասխան մակարդակ և նրան դիմում են որպես կրողի՝ ակնկալելով, որ նա տիրապետում է բավականաչափ ծավալով մշակութաբանական տեղեկատվության:

ՄՀ-ի պայմաններում անհատը կարող է հակված լինել նվազեցնելու կամ հավելելու իր լեզվամշակութային իրազեկության մակարդակը: Դա զգալիորեն կախված է լեզվակիր անձի հոգեբանական բնութագրերից: Հաղորդակցվողների մի մասը անվստահ են գործածում օտար լեզուն, ուրիշները պատրաստ են գլուխ հանել նվազագույն լեզվական միջոցներով: Սեփական միջմշակութային իրազեկության և հասցեատիրոջ իրազեկության ինչպես թերազնահատումը, այնպես էլ գերազնահատումը խոչընդոտում են հաղորդակցմանը: Իր օտարերկրացի գործընկերոջ իրազեկության մակարդակը գերազնահատելիս լեզվակիրը դադարում է շտկել նրա լեզվական ու մշակութային գիտելիքների թերությունները, որի հետևանքով տեղեկատվության մի զգալի մասը կարող է կորչել: Ջրուցակցին թերազնահատելիս հաղորդակցվողն սկսում է գործածել պարզեցված լեզու, որը, ինչպես նշում է Վ. Ի. Կարասիկը, սովորաբար կիրառվում է մարզինալ անձանց նկատմամբ՝ երեխաների, օտարերկրացիների, հիվանդների, ինչի արդյունքում խոսակցի մեջ հարց է ծագում. «Ո՞ւմ տեղն եք դրել ինձ» (ԽՈՐՈՐՈՒՄ 1992, 60):

Այսպիսով, միջմշակութային իրազեկության բավարար մակարդակ կարելի է համարել լեզվական, հաղորդակցային ու մշակութային իրազեկության համընդհանուր մակարդակը, որը համապատասխան շփման հնարավորություն է ընձեռում կոնկրետ սոցիալական միջավայրում:

### **Օգտագործված գրականություն ցանկ:**

1. Богин Г.И. Современная лингводидактика: Учеб.пособие/КГУ.Калинин,1980

2. Залевская А.А. Вопросы теории овладения вторым языком в психолингвистическом аспекте/Твер.гос.ун-т.Тверь, 1996
3. Карасик В.И. Язык социального статуса.М.: Ин-т языкознания РАН; Волгогр.гос.пед.ин-т,1992
4. Караулов Ю.Н. Русский язык и языковая личность.М.:Наука,1987
5. Леонтев А.А. Основы психолингвистики.М.:Смысл, 1997
6. Іàíôðää Ю. Социолингвистика.Киев:Вища шк., 1987
7. Crystal D. The Cambridge Encyclopedia of Language. New York; Port Chester; Melbourne; Sydney; Cambridge: Cambridge University Press, 1987
8. Damen L. Culture Learning: The Fifth dimension in the Language Classroom. USA.: Addison-Wesley Publishing Company, 1987
9. Hirsch E.D., Jr. Cultural Literacy. NY: First Vintage Books Edition, 1988
10. Hirsch E.D., Kett F., Trefil J. Dictionary of Cultural Literacy. Boston—NY, 1993
11. Matyash O.I. Analysis of Communication Competence of Russian Professionals in Organizational Interactions (Doctorial dissertation, Syracuse University, 1999). Dissertation Abstracts International,1999
12. Schumann J. The Implications of Interlanguage, Pidginization and Creolization for the Study of Adult Language Acquisition / TESOL Quarterly, 1974, 8 (2), 1974

**Harutyunyan Narine**

**Doctor of Sciences, Associated Professor**

**Yerevan State University**

**e.mail: [naramela@km.ru](mailto:naramela@km.ru)**

### **Some aspects of building Cross-cultural Competence**

Cross-cultural communication misunderstandings happen all the time. Unfortunately there isn't a way to avoid them. But with the adequate skills you can limit these misunderstandings. Therefore, it has become useful to know about cross-cultural competence.

One definition of cross-cultural competence is that it is the complex of abilities needed to perform effectively and appropriately when interacting with others who are linguistically and culturally different from oneself. The aim of the present article is to describe main types of cross-

cultural competence (linguistic, communicative and cultural) to help a person to be more competent in intercultural relationships and situations.